



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Ս. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ ԿՈՉԸ՝ ՀՕՄ-Ի ՃԱՄՐՈՎ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՔ ԵՐԿԱՐԵԼՈՒ ՃԱՓՈՆԻ ԱՂԵՏԵԱԼՆԵՐՈՒՆ**

Ինչպես ծանօթ է, Ուրբաթ, 11 Մարտին, ճափոնը հարուածած ահաւոր երկրաշարժը եւ անոր յաջորդած ծովաշարժը աղետալի հետեւանքներ ունեցան երկրի բնակչութեան ու տնտեսութեան վրայ: Շարժին տարբեր հետեւանքները օր ըստ օրէ նոր ծաւալ ու տարողութիւն կու տայ պատմական աղետին:

Երկրաշարժն ու անոր բազմերես հետեւանքները ահազանգի մատնած են ամբողջ աշխարհը, որ կը փութայ կարելի միջոցներով օգնութեան հասնիլ աղետեալներուն:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, Կիրակի, 13 Մարտին, թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ »Տէր Ողորմեա«ի յատուկ աղօթք կատարուեցաւ զոհերուն ու աղետեալներուն համար:

Այս առիթով, Առաջնորդ Սրբազանը կոչ կ'ընէ մեր ազնիւ ժողովուրդին, որպէսզի մասնակցութիւն բերէ աղետահարներուն օժանդակութեան ճիգերուն: «Կոչ կ'ընենք, որ միանաք ՀՕՄի ճամբով տեղի ունեցող նուիրահաւաքին եւ լիաբռուն նուիրաբերէք աղետեալներուն: Հայութիւնը 1988ին ապրեցաւ սման աղետի մը դառնութիւնը եւ կարեկից է նոյնպիսի վիճակի մատնուած ժողովուրդներու: Հայաստանի երկրաշարժի օրերուն, հայրենի ժողովուրդը վայելեց բազմաթիւ երկիրներու, ի շարս որոնց՝ ճափոնի օժանդակութիւնը», ըսաւ Առաջնորդ Սրբազանը:

## **PRELATE CALLS ON COMMUNITY TO AID THE VICTIMS OF JAPAN'S EARTHQUAKE THROUGH THE ARS**

By the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, on Sunday, March 13<sup>th</sup>, 2011, "Der Voghormia" prayers were offered in all Prelacy Churches for the victims of the Japan earthquake and tsunami.

International aid is being provided to help the survivors as they cope with this tragedy.

The Prelate has called on the community to assist in the relief efforts by donating to the Armenian Relief Society Japan Disaster Relief Fund. Donations

can be made to local ARS chapters or through the organization's website. "We urge our faithful to participate in the relief efforts through the ARS. The Armenian people have experienced the tragedy of an earthquake and can well relate to the Japanese people. Following the earthquake in 1998, the Armenian people received worldwide aid, including from Japan", said the Prelate.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ԶԱՆԴԻՍԱՊԵՏԷ ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի, 20 Մարտը Մեծ Պահոց 3-րդ Կիրակին է, որ կը կոչուի Անառակի Կիրակի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ Եկեղեցւոյ հոեգւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան:

## **PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. MARY'S CHURCH IN GLENDALE**

Sunday, March 20<sup>th</sup>, is the third Sunday of Great Lent, which is known as Sunday of the Prodigal Son.

H.E. Archbishop Moushegh Mardirossian will preside over Divine Liturgy and deliver the sermon at St. Mary's Church in Glendale.

Parish Pastor Rev. Fr. Vazken Atmajian will celebrate Divine Liturgy.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՍԸ ՏՈՒՄ ԿԼԵՆՏԵՅԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻՆ**



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր.Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Զինգշաբթի, 17 Մարտի յետմիջօրէին, այցելութիւն մը տուաւ Կլենտէյլի ոստիկանութեան կեդրոնը եւ հանդիպում ունեցաւ ոստիկանապետ Ռան ՏԷ

Փոմփայի ու ոստիկանատան տարբեր բաժանմունքներու անոր գործակիցներուն հետ: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանար Արժ. Տ. Վազգէն Քիւյ. Աթմաճեան:

Առաջնորդ Սրբազանին այցելութիւնը փոխադարձութիւն մըն էր այն այցելութեան, զոր Տէ Փոմփա տուած էր Ազգային Առաջնորդարան՝ իր նշանակման առիթով: Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու Կլենտէյլի ոստիկանութեան աշխատանքներուն ու դիմագրաւած հարցերուն մասին: Ինչպէս առաջին հանդիպումին, Հինգշաբթի օր եւս, ոստիկանապետը պատրաստակամութիւն յայտնեց հաղորդակցութիւնները բաց պահելու յատկապէս շրջանի հայութիւնը հետաքրքրող հարցերու մասին: Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, գնահատանքով արտայայտուեցաւ ոստիկանութեան ծառայութիւններուն մասին եւ խոստացաւ կարելիի սահմաններուն մէջ զարգացնել փոխադարձ գործակցութիւնը:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը Ազգ. Առաջնորդարանի մատրան յուշանուէր մը յանձնեց Ոստիկանապետին:

## PRELATE MEETS WITH GLENDALE POLICE CHIEF



On Thursday, March 17<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the Glendale Police Department where he met with Police Chief Ron De Pompa and staff. Pastor of St. Mary's Church Rev. Fr. Vazken Atmajian accompanied the Prelate.

The meeting was the second between the Prelate and Police Chief, the first being last year at the time of

De Pompa's appointment as Police Chief.

The discussion centered on the endeavors of the Glendale Police Department and general issues they face. As during their previous meeting, Chief De Pompa once again iterated he Police Department's readiness to maintain communication with the Prelacy, especially with regards to matters involving the Armenian community.

The Prelate commended Chief De Pompa for his service and commitment to the safety of the community, and assured him that mutual cooperation and collaboration would continue.

At the conclusion of the meeting, the Prelate presented Chief De Pompa with a memento of the Prelacy Chapel.

\*\*\*

## **ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ 10-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ**

Կլենտեյլի Հայ Կաթողիկե համայնքը այս տարի կը տօնէ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ օժման 10-րդ տարեդարձը:

Այս առիթով, Կիրակի, 20 Մարտին տեղի պիտի ունենան յատուկ Ս. Պատարագ եւ ճաշկերոյթ:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագը պիտի մատուցանէ Հիւսիսային Ամերիկայի Կաթողիկե Հայոց Առաջնորդ Ս. Մանուէլ Եպս. Պաթագեան:

Յանուն Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանին, Ս. Պատարագին ներկայ պիտի ըլլայ Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան:

Իսկ 10-ամեակի ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամը 6-ին, Renaissance սրահին մէջ, Կլենտեյլ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ պաշտօնական ճաշկերոյթին: Սրբազան Հօր պիտի ընկերանայ Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան:

## **PRELATE TO ATTEND ST. GREGORY CATHOLIC CHURCH 10<sup>TH</sup> ANNIVERSARY CELEBRATION**

This year the Armenian Catholic community celebrates the 10<sup>th</sup> anniversary of the consecration of St. Gregory Church in Glendale.

On this occasion, on Sunday March 20<sup>th</sup>, Holy Mass will be celebrated by head of the Armenian Catholic Church of North America Bishop Manuel Batakian. The 10<sup>th</sup> anniversary banquet will be held in the evening at Renaissance hall.

On behalf of the Prelate, Very Rev. Fr. Barthev Gulumian will attend the Holy Mass. The Prelate will attend the banquet, accompanied by Fr. Barthev.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻՆ**

Ուրբաթ, 18 Մարտի երեկոյեան Կլենտեյլի «Գրիգոր եւ Մարիամ Գարամանուկեան» Երիտասարդական կեդրոնին մէջ, պիտի գումարուի Համազգայինի Արեւմտեան Շրջանի 17-րդ Ընդհանուր Ժողովը:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ժողովին բացման պաշտօնական արարողութեան եւ պիտի տայ իր պատգամը:

## **PRELATE TO DELIVER MESSAGE AT HAMAZKAYIN GENERAL ASSEMBLY**

The 17<sup>th</sup> Hamazkayin General Assembly will convene on the evening of March 18<sup>th</sup> at the "Krikor and Mariam Karamanoukian" youth center in Glendale.

The Prelate will attend the opening of the assembly and deliver his message.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ CASPSԻ ՄԻՕՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԲԱՑՈՒՄԸ**

Առաջնորդ Սրբազան Հոր հովանաւորութեամբ, Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ գործող CASPS յանձնախումբը աշակերտական միօրեայ համագումար մը կազմակերպած է, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 26 Մարտին, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ:

CASPSը այն յանձնախումբն է, որ կը հոգայ հանրային վարժարաններ յաճախող հայ աշակերտներու կարիքները:

Համագումարին հրաւիրուած են Կլենտէյլի երկրորդական վարժարաններու 12-րդ կարգի աշակերտ-աշակերտուհիներ, որոնք գոհացուցիչ նիշեր ապահոված են:

Համագումարին պաշտօնական բացումը պիտի կատարուի Առաջնորդ Սրբազան Հոր աղօթքով եւ պատգամով մը, ուղղուած համագումարին մասնակցող աշակերտներուն:

Խօսք պիտի առնեն կրթական պատասխանատուներ, տեղեկութիւններ պիտի փոխանցուի CASPS Յանձնախումբի աշխատանքներուն եւ ծրագիրներուն մասին:

## **PRELATE TO DELIVER INVOCATION AND MESSAGE AT CASPS LEADERSHIP SEMINAR**

The Committee for Armenian Students in Public Schools (CASPS), which serves under the auspices of the Prelacy, has organized a leadership seminar to take place on Saturday, March 26<sup>th</sup>, at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

Top high school seniors from Glendale public schools will participate in the seminar.

The seminar will open with the Prelate's invocation and message. Educators and community leaders will be among the panelists.

\*\*\*

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՀՈԿԱՆԱԽՈՐԵՑ ԱՉԳ.  
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՏԻԿԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԻ ՄԵԾ ՊԱՅԹԻ  
ՃԱՇԿԵՐՈՅԹԸ**



Չորեքշաբթի, 16  
Մարտին, Թեմիս  
բարեխնամ Առաջնորդ  
Բարձր. Տ. Մուշեղ Արք.  
Մարտիրոսեան  
հանդիսապետեց Կլենտելի  
Ս. Աստուածածին եկեղեցւոյ  
Արեւագալի  
Ժամերգութեան:  
Արարողութեան մասնակից  
էին Թեմիս մէջ ծառայող  
միաբան եւ քահանայ  
հայրեր:

Արարողութենէն ետք,  
եկեղեցւոյ «Արմենակ Տեր

Պետրոսեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազանին, տեղի ունեցաւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կազմակերպած Մեծ Պահքի ճաշկերոյթը:

Բարի գալուստի խօսք արտասանեց Տ. Օ. Մարմինի ատենապետուհին՝ Տիկին Սալբի Սրուբեան, որ նաեւ ձեռնհասօրէն կատարեց հանդիսավարութիւնը:

Առաջնորդ Սրբազանը կատարեց սեղաններու օրհնութիւնը, փոխանցեց իր գնահատանքի ու օրհնութեան խօսքը եւ գործնական ցուցմունքներ կատարեց Մեծ Պահից շրջանին մասին:

Իբրեւ բանախօս հրաւիրուած էր բազմավաստակ դաստիարակ եւ մտաւորական Տիար Կարօ Պետրոսեան, որ խօսեցաւ Մեծ Պահքի շրջանի խորհուրդներուն մասին, որոնք քրիստոնէայ հաւատացեալին փոխանցուած են Աստուածաշունչին միջոցով:

Իր խօսքի առաջին բաժինով, Տիար Պետրոսեան վեր առաւ հայ կնոջ դերը՝ մեր հասարակական կեանքին ու եկեղեցւոյ առաքելութեան մէջ, ընդգծելով, որ եկեղեցին անցեալին ու ներկայիս կը հանդիսանայ մեր ազգային ամենէն ամուր հաստատութիւնը եւ խոր ազդեցութիւն ունի հայութեան էութեան վրայ: Ան նկատել տուաւ, որ մեր մայրերն ու քոյրերը պէտք է աւելի ամուր կանգնին օտարամուտ ու աղանդաւորական թափանցումի փորձերուն դիմաց, որոնք շեղումներ կ'առաջացնեն մեր հաւաքականութեան մէջ:

Բանախօսը Մեծ Պահքի շրջանը համեմատեց մասնագիտական տարբեր շրջանակներու մէջ տեղի ունեցող գիտաժողովներու, որոնք առիթ են գործի ու կացութեան վերաթելորման, դէպի բարելաւում ձգտումի: Ան ըսաւ, որ Մեծ Պահքի Կիրակիներուն, մեր եկեղեցին կ'անդրադառնայ հինգ խորհուրդներու: Առաջինը՝ ազատութիւնն է. մարդկութեան յիշեցում կը կատարուի, թէ Աստուած մարդը ստեղծած է ազատ, սակայն անիկա ունի

շրջագիծ ու սահմաններ: Երկրորդը՝ ներողամտության ու սխալներու համար գղջումի խորհուրդն է: Երրորդը՝ պատասխանատուության



գիտակցության խորհուրդն է, ուր կը թելադրուի նիւթական ու բարոյական հաշուետուութեան պատրաստ ըլլալ: Չորրորդը՝ յոյսի ու աղօթքի խորհուրդն է. մկրտութեամբ ու եկեղեցւոյ անդամ դառնալով՝ մարդուս կեանքը կը լեցուի հաւատքով, սիրով եւ յոյսով. մարդս արդարութեան իր ձգտումին մէջ կ'ունենայ յոյսը անարդարութեան փարատումին, մանաւանդ նկատի ունենալով, որ պիտի գայ օրը Արդար Դատաւորին առջեւ կանգնելու: Իսկ հինգերորդը՝ Տէր Յիսուսի գալստեան խորհուրդն է, որ մարդկութեան կու տայ Զրիստոսի երկրորդ գալստեան կապուած պատգամները՝ վերանորոգութեան ու նոր կեանքի մը մասին: Այս բոլորէն ետք, եկեղեցին կը յիշատակէ Ծաղկազարդն ու ապա՝ մեծագոյն խորհուրդը՝ Ս. Յարութիւնը,

որ թագադրումը կը կազմէ Մեծ վերականգնումի խորհուրդներուն:

Պահոց շրջանի վերանորոգութեան ու

Իրագործուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր: Նկատի ունենալով, որ 2011 տարին նուիրուած է Հայ Մանուկին, կազմակերպիչ մարմինը այս բաժինը վստահած էր մանուկի մը՝ փոքրիկն Ալեքս Մելքումեանի, որ հմայիչ կերպով երգեց «Չարթիր Լաօ», «Սանթա Լուչիա» եւ «Օ Սուլէ Միօ» երգերը, արժանանալով ներկաներու գնահատանքին ու սիրալիր ծափողջոյններուն:

Հրամցուեցան Պահքի յատուկ ճաշեր:

**PRELACY LADIES AUXILIARY LENT LUNCHEON**



On the morning of Wednesday, March 16<sup>th</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate presided over Sunrise Service at St. Mary's Church in Glendale.

The annual Prelacy Ladies Auxiliary Lent luncheon followed at the adjoining "Armenak Der Bedrossian" Hall.

Welcoming remarks were delivered by Master of

Ceremonies and Ladies Auxiliary Chair Mrs. Salpi Srourian. The Prelate was then invited for the blessing of tables and to convey his thoughts and message on Great Lent.



Keynote speaker Mr. Garo Bedrosian spoke on the meaning and traditions behind Great Lent, on how Lent is a time to evaluate our lives and aim to better ourselves, and the importance of observing Lent for our spiritual and physical renewal. Mr. Bedrosian then spoke of the five messages of Great Lent which are given to us through different parables each Sunday of Lent. They are; free will,

reminding us that although God created mankind to have free will, we still have our limits and boundaries; forgiveness and atonement; accountability and responsibility; hope through prayer, assuring us that our Lord is only a prayer away and also reminding us to be prepared for the day of judgment; and renewal and new life through the second Coming of Christ. We then commemorate the triumphant entry of our Lord Jesus Christ into Jerusalem on Palm Sunday, and finally Easter, when we celebrate the Glorious Resurrection of Christ and receive the ultimate message of hope, renewal, and rebirth.

Given that this year is dedicated to the Armenian child, the cultural program consisted of youngster Alex Melkoumian singing three songs in Armenian and Italian.

A special Lenten feast was offered.

\*\*\*

## ԱԶԳ. ԱՐԻ ԿԻՐԱԿՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ՏՕՆԵՑ ԻՐ 25-ԱՄԵԱԿԸ



Շաբաթ, 12 Մարտին, Օրենճ Քաունթիի Արի Կիրակոս Մինասեան Ազգային վարժարանը տօնեց իր հիմնադրութեան 25-րդ տարեդարձը:

Ձեռնարկը կը վայելէր Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի

հովանավորությունն ու ներկայությունը, եւ կազմակերպուած էր վարժարանի Ճնողա-ուսուցչական եւ Ուսումնական Մարմիններուն կողմէ:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ վարժարանին կից «Ղուկասեան» սրահին մէջ:

Ներկայ էին Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, հոգաբարձութեան անդամեր, միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ, վարժարանի նախկին տնօրէնները, բարերարներ եւ բարեկամներ:

Սեղաններու օրհնութիւնը կատարեց Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Հրանդ Ա. Զինյ. Երեցեան:

Բարի գալուստի խօսք փոխանցեց եւ հանդիսավարութիւնը կատարեց վարժարանի ծնողներէն՝ գերագոյն ատեանի դատաւոր Տիար Անտրէ Մանսուրեան:

Շնորհաւորանքի, գնահատանքի եւ յաջողութեան խօսք արտասանեց վարժարանի տնօրէնուհի Տիկին Գոհար Չաւիր:



Խօսք առաւ վարժարանի առաջին տնօրէնուհին Տիկին Լիլի Սրիկեան: Սրտի խօսք արտասանեց վարժարանի շրջանաւարտներէն Տիար Վաչէ Թովմասեան:

Վարժարանին 25 տարուան գործունէութիւնը ներկայացնող ժապաւեն մը ցուցադրուեցաւ:

Գլխաւոր բանախօսն էր Դոկտ. Կարօ Յակոբեան: Ան յատուկ կարեւորութեամբ վեր առաւ Հայ Դպրոցի առաքելութիւնն ու դերը՝ մեր նորահաս սերունդներու դաստիարակութեան ու հայեցի կրթութեան գործին մէջ, ապա նաեւ կեդրոնացաւ Ազգ. Արի Կիրակոս Մինասեան վարժարանի դերին վրայ, Օրէնճ Քառնթիի հայկական համայնի կեանքին մէջ, նշելով, որ անհկա արդէն

քառորդ դարու պատմութիւն կերտած է:

Օրհնութեան խօսք արտասանեց Առաջնորդ Սրբազանը. ան նախ վեր առաւ ծառայութիւններն ու նուիրումը բոլոր անոնց, որոնք դեր ու բաժին ունեցած են վարժարանի հիմնադրութեան, կարիքներու հոգացման եւ կրթական ու ֆիզիքական բարելաւումին մէջ:

Ան բարձր գնահատեց եկեղեցւոյ հոգաբարձութիւնը, ծնողները եւ բարերարները, ընդգծելով, որ այս դպրոցը միայն անձնակազմին ու ծնողներուն չի պատկանիր, այլ ամբողջ գաղութին, որ ինչպէս անցեալին, նաեւ այսօր ու վաղը ազնիւ պարտականութիւնը ունի հոգալու անոր յառաջդիմութեան նախադրեալները:

Ապա, Առաջնորդ Սրբազան Հայրը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հայրապետական Օրհնութեան գիրը, նուիրուած՝ Արի Կիրակոս Մինասեան Ազգային Վարժարանի 25ամեակին:

Պաշտօնական յայտագիրի ընթացքին, կատարուեցաւ մոմավառութիւն եւ կարկանդակի հատում:

## **ARI GUIRAGOS MINASSIAN SCHOOL 25<sup>TH</sup> ANNIVERSARY BANQUET HELD UNDER THE AUSPICES OF THE PRELATE**



On Saturday, March 12<sup>th</sup>, Ari Guiragos Minassian School in Orange County celebrated its 25<sup>th</sup> anniversary with a banquet held under the auspices of and with the attendance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. The banquet was held at "Gugasian" Hall of Forty Martyrs Church.

The evening began with the blessing of tables by Parish Pastor Rev. Fr. Hrant

Yeretzian.

Welcoming remarks were delivered by Master of Ceremonies Judge Andre Mansourian.

Congratulatory remarks were delivered by Principal Kohar Zaher, past principal Mrs. Lili Mrigian, and alumnus Mr. Vatche Tomassian.

A video highlighting the 25 year history of the school was also presented.

The evening's keynote speaker was Dr. Garo Agopian, who extolled the mission and role of Armenian Schools in the instruction and development of our youth, focusing specifically on AG Minassian School and its role in the community.

In his remarks, the Prelate commended the service and dedication of all who have contributed and continue to contribute to the advancement of the school, including Forty Martyrs Church Pastor and Board of Trustees, parents, administration, sponsors, supporters, and friends.

After his message, the Prelate read the letter of blessing of H.H. Catholicos Aram I.

The official program came to a close with a candle lighting ceremony and the cutting of the cake.

\*\*\*

